Հայտարարվում է մրցույթ Կոտայքի մարզի <<Նոր Հաճնի N1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի <<Մաթեմատիկա>> /21 դասաժամ/ և <<Ռուսաց լեզվի>> /19 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար մրցույթ:

ՈՒսուցիչների պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ տարիֆիկացիայի:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝նշելով այն աշխատատեղը,որին հավակնում է /Ձև 1/
2. Փաստաթուղթ/դիպլոմ/՝<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ
3. Անձնագրի պատճենը
4. Ինքնակենսագրություն/Ձև5/
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի ,հավաստագրերի /պատճենները/ դրանց առկայության դեպքում
6. Մեկ լուսանկար՝ 3X4 չափի
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ
9. Որակավորման տարակարգ

Փաստաթղթերի ընդունվում են դեկտեմբերի 27-ից մինչև հունվարի 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-15:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025 թվականի հունվարի 17-ին, ժամը 14:00, Կոտայքի մարզի << Նոր Հաճնի N1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում, հասցեն՝ ք. Նոր Հաճն , Չարենցի 20: Տեղեկությունների համար զանգահարել՝ /0224/ 4-27-58 հետախոսահամարով: